

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/2

4 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «ՋԻ ՔԵՅ» ՍՊԸ 08.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի ժ/պ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 22.09.2014 թ-ի թիվ 0268714 որոշման դեմ:

#### **«ՋԻ ՔԵՅ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

22.09.2014 թ-ին ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ ժ/պ-ի կողմից կայացվել է թիվ 0268714 որոշումը, համաձայն որի «ՋԻ ՔԵՅ» ՍՊԸ տնօրեն Գուրգեն Պարոնյանը ենթարկվել է վարչական տուգանքի 20.000 դրամի չափով, քանի որ սահմանված ժամկետում չի ներկայացրել 2014 թ-ի 1-2 եռամսյակների ֆիզիկական ծավալների վերաբերյալ հաշվետվությունները:

Կազմակրպությունը զբաղվում է ոսկե զարդերի արտադրությամբ (ներկայացված է շրջանառության հարկի եռամսյակային հաշվարկներով), որը դասվում է 7114 ԱՏԳԱԱ ծածկագրին, արտադրությունը կազմակերպելու համար ոսկու հումքը ներ է մուծվում արտերկրից, ներմուծվող հումքը ունի 7108 13 100 ԱՏԳԱԱ ծածկագիրը: Կենտրոնի ՀՏ կողմից արձանագրություն է կազմվել առ այն, որ կազմակերպությունը սահմանված ժամկետներում չի ներկայացրել ֆիզիկական ծավալների հաշվետվությունը:

Համաձայն ՀՀ կառավարության 01 ապրիլի 2002 թ-ի որոշմամբ հաստատված «Հարկ վճարողների կողմից ՀՀ կառավարության սահմանված ցանկում ընդգրկված ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հաշվետվությունները հարկային մարմիններ ներկայացնելու» կարգի 2-րդ կետի՝ Սույն կարգի դրույթները տարածվում են սույն որոշմամբ հաստատված ցանկերում նշված օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների, ապրանքներ արտադրողների և ներմուծող-իրացնողների վրա:

Համաձայն նույն կարգի 3-րդ կետի՝ Սույն կարգի իմաստով օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների, ապրանքներ արտադրողներ և ներմուծող-իրացնողներ են համարվում Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) հարկ վճարողները, որոնք արտադրում կամ ներմուծում-իրացնում են սույն որոշմամբ հաստատված ցանկերում ընդգրկված ապրանքները:

Հաշվի առնելով վերոգրյալ կետերը հարկ վճարողը թիվ 299 որոշմամբ հաստատված ցանկերում ընդգրկված ապրանքների արտադրությամբ չի զբաղվում, ինչպես նաև այդ ցանկում ընդգրկված ապրանքների ներմուծում-իրացում չի իրականացնում: Տվյալ դեպքում ներմուծում-իրացումն իրենից ներկայացնում է առևտրային գործունեություն, այլ ոչ թե արտադրություն, իսկ հարկատուի արտադրանքը չի դասվում որոշման մեջ ընդգրկված ապրանքների ցանկին: Տվյալ դեպքում հարկատուն միայն ներմուծում է վերը նշված որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված ապրանքներ, իսկ ըստ թիվ 299 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 3-րդ կետերի, այդ կարգի դրույթները չեն տարածվում վերը նշված գործունեությամբ զբաղվող հարկ վճարողներին:

Կենտրոնի ՀՏ կողմից թիվ 299 որոշմամբ հաստատված կարգի բովանդակությունը մեկնաբանվել է յուրովի և ներմուծում-իրացում արտահայտությունը դիտարկվել է որպես առանձին բաղադրիչ՝ ներմուծող և (կամ) իրացնող, որն ամբողջությամբ փոխում է վերը նշված կարգի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված պայմանները:

Տվյալ դեպքում Որոշումը կայացնելիս խախտվել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 10-րդ հոդվածների պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել թիվ 0268714 որոշումը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՋԻ ՔԵՅ» ՍՊԸ կողմից 29.01.2014 թ-ին և 26.03.2014 թ-ին ՀՀ տարածք է ներմուծվել թիվ 710813800 ծածկագրին դասվող կիսաֆարբրիկատներ (ոսկե ձողիկներ), որոնց մաքսային արժեքը կազմել է 11.081.961 դրամ:

Նշվեց նաև, որ «ՋԻ ՔԵՅ» ՍՊԸ կողմից 2013 թ-ի 3-րդ եռամսյակի համար հարկային մարմին ներկայացված շրջանառության հարկի հաշվարկում գործունեության տեսակը (կոդը) մասում նշվել է G 4690 ծածկագիրը՝ ոչ մասնագիտացված մեծածախ առևտուր:

ՀՀ կառավարության 01.04.2002 թ-ի թիվ 299 որոշման 1-ին կետի գ) ենթակետով հաստատվել է այն օգտակար հանաժոների և դրանց արտադրատեսակների ցանկը, որոնց արդյունահանման, շրջանառության ֆիզիկական ծավալների և գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հարկ վճարողները հաշվետվություններ են ներկայացնում հարկային մարմիններ՝ համաձայն նույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի:

Հավելված N 3-ով սահմանվել է այն օգտակար հանաժոների և դրանց արտադրատեսակների ցանկը, որոնց արդյունահանման, շրջանառության ֆիզիկական ծավալների և գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հարկ վճարողները հաշվետվություններ են ներկայացնում հարկային մարմիններ:

Հավելված N 3-ի համաձայն ԱՏԳԱԱ-ի թիվ 7108 13 800 ծածկագրին դասվող օգտակար հանաժոյի և դրա արտադրատեսակի արդյունահանման, շրջանառության ֆիզիկական ծավալների և գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հարկ վճարողները պարտավոր են հաշվետվություններ ներկայացնել հարկային մարմիններ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ «ՋԻ ՔԵՅ» ՍՊԸ կողմից 2014 թ-ի 1-ին և 2-րդ եռամսյակների համար պետք է ներկայացվեր ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հաշվետվություն, ինչը, սակայն, չի ներկայացվել: Արդյունքում, «ՋԻ ՔԵՅ» ՍՊԸ տնօրենը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո թ ո շ ու մ է՝**

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի ժ/պ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 22.09.2014 թ-ի թիվ 0268714 որոշումը թողնել անփոփոխ՝ իսկ գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

